ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Գրենոբլ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Գնել Սանոսյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Գրենոբլ), 2019 թվականի նոյեմբերի 5-ից 8-ը:

Հրավիրող կողմը՝ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտ:

Գործուղման նպատակը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի և Իզերի դեպարտամենտի միջև 2019-2021 թվականների ապակենտրոնացված համագործակցության պայմանագրի ստորագրում:

Քննարկված թեմաները՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի և Իզերի դեպարտամենտի միջև առկա արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև Իզերի դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում իրականացվող ընթացիկ և նոր ծրագրերի ներդրմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի միջև 2019-2021 թվականներին ապակենտրոնացված համագործակցության պայմանագիր ստորագրելու, առկա արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև Իզերի դեպարտամենտի կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում իրականացվող ընթացիկ և նոր ծրագրերի ներդրմանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով ս.թ. նոյեմբերի 5-ից 8-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետությունում (Գրենոբլ):

Ս.թ. նոյեմբերի 6-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետը Օտրանում հադիպել է «ԱՖՐԱՏ» միջազգային տուրիստական կազմակերպության հետ, որտեղ կազմակերպության տնօրենը և ներկայացուցիչները ներկայացրել են «ԱՖՐԱՏ»-ի առաքելությունները, քայլարշավային երթուղիները, բնապահպանական, զբոսաշրջության գործունեությունը, ինչպես նաև Վերկորի բնական մարզային պարկի դերը տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման գործում: Այնուհետև հանդիպումներ, քննարկումներ և մտքերի փոխանակում են իրականացվել մի շարք տուրիստական ծրագրերի պատասխանատուների մասնակցությամբ: ՀՀ Գեղարքունիքի մարզպետը հանդիպումներ է ունեցել նաև Օտրանի և Մեոդր համայնքների ղեկավարների, ինչպես նաև Վերկորի ազգային պարկի ղեկավարի հետ: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնությամբ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Վերկորի պարկի ղեկավարի և Իզերի դեպարտամենտի խորհրդի ժառանգության և ապակենտրոնացված

համագործակցության հարցերով նախագահի տեղակալի հետ համագործակցություն սկսել Սևան ազգային պարկի հետ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետը ս.թ. նոյեմբերի 7-ին հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտում, որոնց ընթացքում ծանոթացել է ապակենտրոնացված համագործակցային ոլորտների պատասխանատուների և իրականացված ու հետագայում իրականացվելիք ծրագրերին:

Այցի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետը մասնակցել է նաև «IRAPA» հարթակի հանձնախմբի ժողովին, համատեղ քննարկել զբոսաշրջության ոլորտում իրականացված և նախատեսվող ծրագրերը: «IRAPA» հարթակի հանձնախմբի ժողովին ներկա են գտնվել Իզերի դեպարտամենտի ժառանգության և ապակենտրոնացված համագործակցության հարցերով նախագահի տեղակալը, դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցները, Վիենի քաղաքապետի տեղակալը, զբոսաշրջության ոլորտի պատասխանատուն, Գրենոբլի քաղաքապետի տեղակալը, պատասխանատու աշխատակիցներ, ինչպես նաև Սևանի քաղաքապետարանի պատվիրակությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետը հանդիպում է ունեցել նաև ֆրանսիական «Բժշկական օգնություն և զարգացում» միջազգային ասոցիացիայի անդամների հետ, որի ընթացքում կողմերն անդրադարձել են Գեղարքունիք-Իզեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2019 թվականին իրականացվող ծրագրին և պայմանավորվածություն է ձեռք բերվել 2020-2021 թվականների ընթացքում ծրագրային հեռանկարների վերաբերյալ:

Հանդիպում է կայացել նաև «Հայաստան. փոխանակում և աջակցություն» ասոցիացիայի ներկայացուցիչների հետ, որտեղ ամփոփվել են 2019 թվականի ընթացքում իրականացված ծրագրերը և քննարկվել է 2020-2021 թվականների ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ծրագրային հեռանկարները: Քննարկվել է նաև «Հայաստան. փոխանակում և աջակցություն» ասոցիացիայի կողմից Գրենոբլում հայկական մշակույթի առաջխաղացմանը նպաստող միջոցառումներին առնչվող հարցեր:

Ի պատիվ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի՝ Գրենոբլի Դոֆինեի հայ մշակույթի տանը տեղի է ունեցել ընդունելություն: Վերջինիս մասնակցել են Իզերի դեպարտամենտի խորհրդի ժառանգության և ապակենտրոնացված համագործակցության հարցերով նախագահի տեղակալը, դեպարտամենտի աշխատակիցները, Լիոնում Հայաստանի փոխհյուպատոս Գայանե Մանուկյանը, Գրենոբլի քաղաքապետի տեղակալը, ինչպես նաև Գրենոբլ քաղաքում գործող և հայկական սփյուռքը ներկայացնող ասոցիացիաների ներկայացուցիչները: Միջոցառմանը ելույթներով հանդես են եկել Գեղարքունիքի մարզպետը և Իզերի դեպարտամենտի խորհրդի ժառանգության և ապակենտրոնացված համագործակցության հարցերով նախագահի տեղակալը, որից հետո ներկայացվել է Իզեր-Գեղարքունիք և Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցությունների շրջանակներում ֆրանսիական օպերատորների կողմից տարբեր ոլորտներում իրականացված ծրագրերը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը մասնակցել է նաև Սևանի և Գրենոբլի քաղաքապետարանների միջև 2020-2022 թվականների ապակենտրոնացված համագործակցության պայմանգրի ստորագրման արարողությանը:

Հանդիպման ընթացքում ստորագրված փաստաթղթերը.

2019թ. նոյեմբերի 8-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի նախագահը Ժան-Պիեռ Բարբիեն Իզերի դեպարտամենտում ստորագրել են ապակենտրոնացված համագործակցության 2019-2021 թվականների պայմանագիր: Վերջինիս հիմնական առանցքներն են՝ զբոսաշրջություն, ֆրանսերեն լեզվի ուսուցում և տարածում, մշակույթ և առողջապահություն: Նշված ժամանակահատվածում կողմերը շարունակելու են զարգացնել և խորացնել ապակենտրոնացված համագործակցությունը զբոսաշրջության, ֆրանսերեն լեզվի ուսուցման և տարածման, մշակույթի և առողջապահության ոլորտներում:

Հարկ է նաև նշել, որ վերը նշված պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողությունից հետո Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը և Իզերի դեպարտամենտի նախագահը Ժան-Պիեռ Բարբիեն հանդես են եկել ելույթներով և ներկայացրել են Իզեր-Գեղարքունիք ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում իրականացված ծրագրերի կարևորությունը, արդյունավետությունը և հայ-ֆրանսիական բարեկամության խորը արմատները:

X _____

ՀՀ Գեղարքունիք մարզպետ

Գնել Սանոսյան

12.11.2019թ.